

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2011թ. „Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի „4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ օգնության կարգով հատկացնել Վարդենիս քաղաքի բնակիչ, բազմանդամ ընտանիքի հայր Արամ Հարությունյանին՝ ԵՊՀ-ում սովորող երկու երեխաների ուսման վարձը մասնակի վճարելու համար:

2. Մարզպետի խորհրդական Օ. Չիչոյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել Վարդենիս քաղաքի բնակիչ Արամ Հարությունյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ